

# ARMENIAN ASTRONOMICAL SOCIETY

Հայկական Աստղագիտական Ընկերություն



[Home](#) [About](#) [Membership](#) [ArAS Awards](#) [ArAS Newsletters](#) [ArAS Annual Meetings](#) [ArAS School Lectures](#) [Contacts](#)

## FAMOUS ARMENIAN ASTRONOMERS

						
<a href="#"><u>Anania SHIRAKATSI</u></a> (612-685)	<a href="#"><u>Victor AMBARTSUMIAN</u></a> (1908-1996)	<a href="#"><u>Benjamin MARKARIAN</u></a> (1913-1985)	<a href="#"><u>Agop TERZAN</u></a> (b. 1927)	<a href="#"><u>Marat ARAKELIAN</u></a> (1929-1983)	<a href="#"><u>Vahé PETROSIAN</u></a> (b. 1938)	<a href="#"><u>Grigor GURZADYAN</u></a> (1922-2014)
						
<a href="#"><u>Paris PISMIS</u></a> (1911-1999)	<a href="#"><u>Tadevos AGHEKIAN</u></a> (1913-2006)	<a href="#"><u>Gurgen SAHAKIAN</u></a> (1913-2000)	<a href="#"><u>Benik TUMANIAN</u></a> (1917-1980)	<a href="#"><u>Alenush TERIAN</u></a> (1920-2011)	<a href="#"><u>Vahé OSKANIAN</u></a> (1921-1989)	<a href="#"><u>Ludwik MIRZOYAN</u></a> (1923-1999)
						
<a href="#"><u>Romela SHAHBAZIAN</u></a> (1925-2012)	<a href="#"><u>Gabriel KOJOIAN</u></a> (1927-1998)	<a href="#"><u>Hrant TOVMASSIAN</u></a> (b. 1929)	<a href="#"><u>Elma PARSAMIAN</u></a> (b. 1929)	<a href="#"><u>Zadig MOURADIAN</u></a> (b. 1930)	<a href="#"><u>Davit SEDRAKIAN</u></a> (b. 1938)	<a href="#"><u>Yervant TERZIAN</u></a> (b. 1939)

See the list of [Armenian astronomers – members of international organizations](#).

Articles on other well-known Armenian astronomers and ArAS members read in ArAS Newsletters:

# 2019թ. հոբելյաններ

15.01 – Մարատ Առաքելյան – 90

09.02 – Երվանդ Թերզյան – 80

03.06 – Հրանտ Թովմասյան – 90

23.12 – Էլմա Պարսամյան – 90

15.02 – Ռուբեն Սահակյան – 105

27.03 – Ռուբեն Անդրեասյան – 70

21.04 – Լևոն Հախվերդյան – 70


18.05 – Աշոտ Չիլինգարյան – 70

10.06 – Մարտին Աբրահամյան – 70

20.09 – Արմեն Օսկանյան – 70

08.11 – Կանո Գիգոյան – 60

18.12 – Գագիկ Թովմասյան – 60





Մարատ Առաքելյան – 90



# ARMENIAN ASTRONOMICAL SOCIETY

## Հայկական Աստղագիտական Ընկերություն



- Home
- About
- Membership
- ArAS Awards
- ArAS Newsletters
- ArAS Annual Meetings
- ArAS School Lectures
- Contacts

- Byurakan Observatory
- Other Institutions
- Famous Astronomers
- Armenian Astronomers
- Viktor Ambartsumian International Prize
- Digitized First Byurakan Survey
- Armenian Virtual Observatory
- Astronomical Education
- Astronomy Schools
- International Year of Astronomy 2009
- Amateur Astronomy
- Archaeoastronomy
- ANSEF Grants
- Calendar of Events
- Mass Media News
- Useful Links

### ՄԱՐՍ ԱՈՒԹԷԼՅԱՆ (1929-1983)



Վերջերս լրացավ հայ անվանի աստղագետ Մարտո Առաքելյանի 80-ամյակը: Նրա անունով են կոչվում իր հայտնաբերած մակերևութային բարձր պայծառության գալակտիկաները (**Առաքելյանի գալակտիկաներ**, **Arakelian galaxies**), որոնց այսօր բազմակողմանի ուսումնասիրությունների առարկա են աշխարհի բազմաթիվ աստղագետների և մի շարք տիեզերական դիտակների համար:

Մարտո Արսենի Առաքելյանը ծնվել է 1929թ. հունվարի 15-ին Գորիսում: Սովորել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ֆիզ.-մաթ. բաժանմունքում, որն ավարտել է 1951թ.՝ աստղաֆիզիկայի ուղղությամբ մասնագիտացած առաջին շրջանավարտների թվում: Աշխատանքի է ընդունվել Բյուրականի աստղագիտարանում (ԲԱ), որտեղ սկզբում աշխատել է որպես ավագ լաբորանտ, հետո որպես կրտսեր գիտաշխատակից: Շուտով, ընդունվելով Լենինգրադի (ներկայիս Սանկտ Պետերբուրգի) պետական համալսարանի (ԼՊՀ) ասպիրանտուրա, մեկնել է Լենինգրադ, որտեղ սովորել է աշխատել է մինչև 1966թ.: 1955թ. ասպիրանտուրան ավարտելուց հետո, 1956թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական թեզը *«Ալգոլի սպեկտրալուսաչափական ուսումնասիրություն»* թեմայով, պրոֆ. Օ.Ա. Մելնիկովի ղեկավարությամբ:

1957-1959թթ. Առաքելյանը իր աշխատանքը համատեղում է ԼՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնի հետ: 1960-1966-ին նա կրտսեր գիտաշխատակից էր և միաժամանակ դասավանդում էր ԼՊՀ-ում, ստանալով դոցենտի կոչում: 1966-ից Առաքելյանը կրկին աշխատում է ԲԱ-ում և գիտահետազոտական աշխատանքը համատեղում է ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնում դասավանդման հետ: 1967-ից ԲԱ ավագ գիտաշխատակից է և ղեկավարում է կարևոր ուղղություն արտագալակտիկական աստղագիտության մեջ:

1977թ. Առաքելյանը Մոսկվայի պետական համալսարանում (ՄՊՀ) պաշտպանում է դոկտորական թեզ՝ *«Ալկոլի միջուկներով գալակտիկաների սպեկտրալ դիտումներ և վիճակագրություն»* թեմայով և դառնում ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր:

Առաքելյանը հայտնի է որպես տեսական աստղաֆիզիկայի և արտագալակտիկական աստղագիտության բնագավառներում ճանաչված մասնագետ: Նրա գիտական աշխատանքները լայն ճանաչում ունեն: Նա ապացուցել է թվագարների արտագալակտիկական ծագումը և առաջարկել արտագալակտիկական օբյեկտների տարածական խտության որոշման նոր մեթոդ: ՄՊՀ Շտերնբերգի աստղագիտական ինստիտուտի մասնագետների հետ համատեղ չափել է 800 թույլ գալակտիկաների և թվագարների տեսագծային արագությունները:

Է.Ա. Դիբայի և Վ.Ֆ. Եսիպովի հետ համատեղ Առաքելյանը իրականացրել է մի քանի հարյուր *Մարզադայանի գալակտիկաների* սպեկտրալ դիտումներ և ուսումնասիրություններ և դրանց մեջ հայտնաբերել է ավելի քան 40 նոր Սեյֆերտի տիպի գալակտիկա: Դետագայում նրանց դիտեցին և ուսումնասիրեցին հենց Առաքելյանի կողմից բացահայտված մակերևութային բարձր պայծառության նոր գալակտիկաները:

Առաքելյանի կողմից ստեղծված *«Մակերևութային բարձր պայծառության գալակտիկաների կատալոգը»* քաջ հայտնի է բոլոր աստղագետներին: Նրա կատալոգի օբյեկտները (այսպես կոչված **Առաքելյանի գալակտիկաները**) դիտվել են ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ և այլ երկրների մի շարք աստղագիտարաններում օպտիկական, ռադիո և ռենտգենյան ալիքներում:

Առաքելյանը կատարել է մի շարք այլ հետազոտություններ, ինչպիսիք են 711 գալակտիկաների կենտրոնական տիրույթների դասակարգումը, Սեյֆերտի գալակտիկաներում սպեկտրալ առաջնան գծերի ինտենսիվության գույնի ցուցիչից կախվածության ուսումնասիրությունը, կույտերում Սեյֆերտի գալակտիկաների ուսումնասիրությունը (Վ.Յու. Տերեբիժի հետ համատեղ), մեկուսացված գալակտիկաների և գալակտիկաների զույգերի բաղադրիչների ձևաբանական դասերի վերաբերյալ վիճակագրական աշխատանքը և այլն:

Իր գիտական աշխատանքը Առաքելյանը համատեղում էր նաև մանկավարժական գործունեության հետ: 1982թ. ընտրվում է Խ. Արքվյանի անվ. Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի աստղաֆիզիկայի և տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ: Նա միջնակարգ դպրոցների համար գրված *«Աստղագիտություն»* դասագրքի համահեղինակ է: Առաքելյանը խմբագրել է Բյուրականում կայացած միջազգային մի շարք գիտաժողովների նյութերի ժողովածուները:

Առաքելյանը շուրջ 100 գիտական հրապարակումների հեղինակ է, որոնց տպագրվել են զանազան աստղագիտական ամսագրերում, այդ թվում *Астрофизика*, *Astronomical Journal*, *Astrophysical Journal*, *Письма в Астрономический Журнал*, *Астрономический Циркуляр*, և այլ հանդեսներում: 1973-ից Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ) թիվ 28 հանձնաժողովի անդամ էր:

# Chronology of life and activity

- 1929 M.A. Arakelian was born on January 15 in Goris
- 1946-51 student, Phys.-Math. Department, YSU
- 1951 assistant astronomer (later junior res. assoc.), BAO
- 1953-55 postgraduate student, Leningrad State University (LSU)
- 1956 Ph.D. thesis "*Spectrophotometric investigation of Algol*" (sup.: Prof. O.A. Melnikov)
- 1957-59 senior teacher, Department of Astrophysics, YSU
- 1960-66 junior researcher and lecturer, LSU (196? – Associate Professor)
- 1966-83 work at BAO and lecturer at the Department of Astrophysics of the YSU
- 1967 senior researcher at BAO, head of a group?
- 1968-69 study of the luminosity evolution of quasars, a paper in *Nature* in 1970
- 1970-71 the proof of the extragalactic origin of quasars
- 1970-73 spectroscopic observations of Markarian galaxies (*with E.A. Dibai and V.F. Esipov*)
- 1973 suggestion of a new method for definition of space density of extragalactic objects and estimation of the mean density of matter in the Metagalaxy
- 1973 member of the International Astronomical Union (IAU), Commission #28 "*Galaxies*"
- 1975 catalogue of "Galaxies of high surface brightness" (*Arakelian galaxies, Akn*), 621 objects
- 1975-76 spectroscopic observations of *Arakelian galaxies (with E.A. Dibai and V.F. Esipov)*
- 1977 Doctoral thesis "*Spectral observations and statistics of galaxies with active nuclei*", MSU
- 1982 Chair, Dept Astrophys. & Theor. Phys, Arm. State Pedagogical Inst. after Kh. Abovian
- 1983 method for construction of the luminosity function of the components of double galaxies
- 1983 M.A. Arakelian passed away on January 20 in Moscow

# Scientific results

- 1968** Study of the **luminosity function and the stellar space density in the solar neighbourhood**. The results were published in *Astrophysics*.
- 1968-69** **Study of the luminosity evolution of quasars** based on the evolutionary effects associated with them. *Astrophysics* (*Астрофизика*, 2 papers in 1969-1970), *Soviet Astronomical Circular* (*Астрон. циркуляр*), and a summary in *Nature* (vol. 225, p. 358-359, 1970).
- 1969-70** **Statistical study of flare stars in the solar vicinity**. *Commun. Konkoly Obs.*, *Commun. BAO*, conf. "Non-periodic phenomena in variable stars", 1969.
- 1970** **Derivation of the luminosity function of field galaxies** (together with **A.T. Kalloghlian**). *Soviet Astronomy* (*Астрон. Ж.*).
- 1970-71** **The proof of the extragalactic origin of quasars**. *Astrophysics* and *Вестник АН СССР* (*Bulletin of the USSR Acad. Sci.*).
- 1970-73** **Spectroscopic observations and studies of a few hundred Markarian galaxies and discovery of more than 40 new Seyferts** among them (with **E.A. Dibai** and **V.F. Esipov**). Series of 8 papers in *Astrophysics* and 5 papers in the *Soviet Astron. Circular*.
- 1972-74** Analysis of the **surface brightness of emission-line galaxies** (including Seyfert and Markarian ones) and development of **method for revealing galaxies with high surface brightness**. Three papers in *Astrophysics*.
- 1973** Suggestion of a **new method for definition of space density of extragalactic objects** and estimation of the **mean density of matter in the Metagalaxy**. *Astrophysics*.

# Scientific results





- 1975** Compilation and publication of the catalogue of “**Galaxies of high surface brightness**” (named **Arakelian galaxies, Akn**), a list of 621 objects with surface brightness at least 22.0 mag/sq. arcsec. The sample contained 4% of all galaxies in an area of with  $\delta > -3^\circ$  and  $|b| > 20^\circ$ . Arakelian catalog became a source for many new AGN (*Commun. BAO, No. 47, p. 3-42, 1975*).
- 1975** **Derivations of the luminosity function and space density of galaxies with UV continuum** (*Markarian galaxies*). *Soviet Astronomy*.
- 1975-76** **Spectroscopic observations and studies of Arakelian galaxies and discovery of new Seyferts** among them (*with E.A. Dibai and V.F. Esipov*). Series of 4 papers in *Astrophysics*, a paper in the *Soviet Astron. Circular*, meeting “*Stars and galaxies from observational points of view*”, 1975.
- 1976-77** Study of the **dependence of the emission-line intensities of Markarian and Seyfert galaxies on their color index**. Two papers in *Astrophysics*.
- 1977** Study of the **distribution of the mean surface brightness of galaxies in the Coma cluster**. *Astrophysics*.
- 1977-80** Study of the **relation between the mean surface brightness and radio emission of galaxies**, including Seyfert galaxies (*with R.A. Kandalyan*). Two papers in *Astrophysics*.

# Scientific results

- 1981** Study of the estimations of the kinetic energies of clusters of galaxies; the extent to which a kinetic energy estimate would be affected by a possible mass dependence of the velocity dispersion of galaxies in clusters was considered. It was concluded that in some cases the kinetic energy might be underestimated (with A.G. Kritsuk). *Astrophysics*.
- 1980-81** Radio (6cm) observations of Arakelian galaxies and publication of their accurate positions (with US astronomers G. Kojoian, D.F. Dickinson, R. Elliott, M.D. Bica). *Astronomical Journal*.
- 1981-82** Comparative study and statistics of the surface brightness and morphological types of isolated and double galaxies (with A.P. Mahtessian). Two papers in *Astrophysics*.
- 1981-82** Study of Seyfert galaxies in clusters and Seyfert properties of the cluster galaxies (with V.Yu. Terebizh). *Soviet Astron. Circular* and *Astron. Letters (Письма в АЖ)*.
- 1983** Proposing a method for construction of the luminosity function of the components of double galaxies on the basis of an arbitrary sample of pairs of galaxies. The results were applied to the data of Karachentsev's Catalog of Isolated Pairs. The presence of a correlation between the absolute magnitudes of the components of pairs was confirmed. *Astrophysics*.
- 1986** A method for the determination of the bivariate luminosity function utilizing an incomplete sample with an application to Seyfert galaxies. It was shown that the results of incomplete radio and X-ray surveys could be used for the determination of the bivariate luminosity functions, having both the distribution of luminosities of objects in the detected subsample and the distribution of apparent magnitudes in the surveyed sample. *Astrophysical Journal*.

# Summary of scientific results

- **Arakelian catalog** of 621 high-surface-brightness galaxies
- proving the **extragalactic origin of quasars**
- determination of the **space density of extragalactic objects**
- several methods for study of **properties of extragalactic objects**
- comparative analysis of **properties of different types of galaxies**
- **spectroscopic observations and study of some 800 faint galaxies and QSOs, discovery of a few dozens Sy-s** (*with Russian colleagues*)
- **Arakelian galaxies** have been observed in many observatories in the USA, UK, USSR, and elsewhere in optical wavelengths, radio and X-rays
- most interesting Arakelian galaxies: **Akn 120** and **Akn 564** (strongly variable AGN in X-ray and optical wavelengths; Akn 564 is a Narrow-Line Seyfert 1 that strongly changes the intensities of its emission lines); also Akn 79, Akn 81, Akn 347, Akn 479, Akn 524, Akn 539, Akn 557, etc.



# Summary of publications (76)

<b>Nature</b>	2	1968, 1970
<b>Astron. J.</b>	1	1981
<b>Astrophys. J.</b>	1	1986
<b>Астрон. Ж.</b>	4	1959-1975
<b>ПАЖ</b>	2	1982
<b>ДАН СССР, серия Физика</b>	1	1968
<b>Астрофизика</b>	31	1968-1983
<b>Вестник АН СССР</b>	2	1969, 1971
<b>Сообщения БАО</b>	3	1970-1975
<b>Commun. Konkoly Obs.</b>	1	1969
<b>Астрон. Циркуляр</b>	8	1970-1981
<b>BAAS</b>	2	1980-1981
<b>Proceedings of meetings</b>	3	1969, 1976, 1978
<b>PhD thesis</b>	1	1956
<b>Doctoral thesis</b>	1	1977
<b>Մասնագիտություն, դասագիրք</b>	3	1970, 1971, 1973
<b>Clusters of Galaxies (In Book)</b>	1	1981
<b>Editing of Byurakan Symposia</b>	2	1956, 1966




# Յունվար

# 2010

# January



**Մարատ ԱՌԱՔԵԼՅԱՆ** (1929-1983): Չայ անվանի աստղաֆիզիկոս, ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր (1977): Ծնվել է հունվ. 15-ին Գորիսում: Ավարտել է ԵՊՀ (1951), Բյուրականի աստղադիտարանի ավագ գիտաշխատակից, Երևանի և Լենինգրադի պետ. համալսարանների դասախոս, Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկ. մանկավարժական ինստ. տեսական ֆիզիկայի և աստղագիտության ամբիոնի վարիչ (1982-83): Չայտնաբերել է բարձր մակերևութային պայծառություն ունեցող 621 գալակտիկա (**Առաքելյանի գալակտիկաներ**): Արժեքավոր արդյունքներ է ստացել գալակտիկաների սպեկտրային հետազոտությունների և վիճակագրության բնագավառում: Միջազգային աստղագիտական միության անդամ (1973):



Երկ/Mon	Երք/Tue	Չրք/Wed	Չնգ/Thu	Ուրբ/Fri	Շբթ/Sat	Կիր/Sun
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	31

Յունվարին ծնվել են նաև հայ աստղագետներ **Արսեն Քալլոյանը** (1931), **Ռոբերտ Եփրեմյանը** (1938), **Արթուր Նիկողոսյանը** (1941), **Ղազար Գասպարյանը** (1946), **Սերգեյ Ներսիսյանը** (1947), **Նորետա Անդրեասյան-Թոմասը** (1950), **Անահիտ Եղիազարյանը** (1952), **Էմիլիա Կարապետյանը** (1956), **Վալերի Չամբարյանը** (1958) և **Սմբատ Բալայանը** (1965):

<input checked="" type="radio"/> 2 հունվարի	<input type="radio"/> 9 հունվարի	<input type="radio"/> 16 հունվարի	<input checked="" type="radio"/> 25 հունվարի
---	----------------------------------	-----------------------------------	--